ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.12.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/314

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
Մասնակից՝ «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/117» գնանշման հարցման ընթացակարգ, էլեկտրական օդաճնշակի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.11.2021թ.-ի թիվ 26/26-1/15513-2021 գրությամբ «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 15.09.2021թ. թիվ 39/02-28-707 գրության հիման վրա, 03.11.2021թ.-ին «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 03.11.2021թ.-ին:

08.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/314 համարի ծածկագիրը:

12.11.2021թ.-ին և 03.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.12.2021թ.-ին:

2. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.09.2021թ. թիվ 39/02-28-707 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի օգոստոսի 12-ին հայտարարված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտրական օդաճնշակի ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/117 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02262902, գործունեության հասցե՝ ՀՀ, մարզ Գեղարքունիք, գ. Ծակքար, Հեռ.՝ +374 94 929628, էլ. հասցե՝ yerevan.electro@gmail.com):

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից 27.08.2021թ.-ին, «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին armeps համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/117-1 ծածկագրով պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում (ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում) վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կգրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝

համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Հայտնում ենք, որ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ փաստաթղթերը առ այսօր չեն ներկայացվել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները՝ գնահատող հանձնաժողովը «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի ավալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգերի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/117» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.11.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.11.2021թ.-ի թիվ 26/26-1/15513-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը 12.11.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

« I. ՀՀ Սահմանադրության «Պետական կառավարման համակարգի մարմինները» վերտառությամբ 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Պետական կառավարման

համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև (...) նախարարություններին ենթակա այլ մարմիններ, (...) որոնց (...) լիազորությունները սահմանվում են օրենքով:»:

Պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2- րդ մասի 18-րդ կետի համաձայն «2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝ 18) գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը:»:

ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 743-Ա որոշման 34-րդ կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմիններն են՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:

ՀՀ Կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի 850-Ա որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի (ա.) պարբերության համաձայն. «12) Ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին է՝ ա. գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:»:

Վերը նշված նորմերի համաձայն, լինելով ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին, գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք հանդիսանում են պետական կառավարման համակարգի մարմին, այդ իսկ պատճառով գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց լիազորությունները սահմանվում են օրենքներով, հետևաբար վերջիններս իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքներով, մասնավորապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

II. ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ600-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝

«2. Բողոքը ներկայացվում է Լիազորված մարմին (այսուհետ՝ նաև Նախարարություն) գրավոր՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեով կամ դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը secretariat@minfin.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: (...):

3. Ստացված բողոքը նախարարության քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) կողմից մուտքագրվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ (այսուհետ՝ համակարգ) և նույն օրը համակարգի միջոցով տրամադրվում է Անձին: (...):

4. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը նախաձեռնում է նախարարությունը՝ Գնումների քաղաքականության վարչության միջոցով, համապատասխան փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գրավոր տրամադրելու

եղանակով: Ընդ որում, (...) ընթացակարգը համարվում է սկսված փաստաթղթերն Անձին տրամադրվելու օրվանից:»

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տկյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը գրվածից հետևում է, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու ընթացակարգը նախաձեռնում է ՀՀ ֆինանսների նախարարությունը: Ընդ որում, Ցուցակում ներառելու ընթացակարգը նախաձեռնվում է մասնակցի վերաբերյալ պատվիրատուի ուղարկած տվյալները ՀՀ ֆինանսների նախարարությունում մուտքագրվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում:

III. Համադրելով սույն գործում առկա փաստական հանգամանքները և սույն դիրքորոշման I ու II կետերը կարող ենք փաստել, որ այս ընթացակարգը նախաձեռնվել է վերոգրյալ նորմերի խախտումներով, հետևաբար այն անհրաժեշտ է դադարեցնել, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունը և գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հանդիսանալով պետական կառավարման մարմիններ իրավասու են միայն անել այն ինչի համար ուղղակիորեն լիազորված են օրենքով, տվյալ դեպքում ՀՀ ֆինանսների նախարարի 600-ն և ՀՀ կառավարության 526-Ն որոշումների համաձայն սույն ընթացակարգը հնարավոր էր նախաձեռնել միայն մասնակցի՝ «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները ՀՀ ֆինանսների նախարարությունում ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում: Մինչդեռ, այս ընթացակարգը նախաձեռնվել է մասնակցի վերաբերյալ տփալները ՀՀ ֆինանսների նախարարությունում ստանալու օրվան հաջրդող 33-րդ աշխատանքային օրը: Նշյալից կարող ենք փաստել, որ այս ընթացակարգը նախաձեռնվել է օրնքի խախտամաբ, ուստի այն պետք է դադարեցվի:

IV. Ինչ վերաբերվում է պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները ժամանակին չներկայացնելուն, ապա կարող ենք ասել, որ դա տեղի է ունեցել ոչ մեր մեղքով, քանի որ պատվիրատուի ուղարկած ծանուցումը մեզ համար

անհասկանալի պատճառներով հայտնվել է էլեկտրոնային փոստի սպամ թղթապանակում, որտեղ սովորաբար հայտնվում են:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոնքեր քննող անձին խնդրել է դադարեցնել կամ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ թիվ ՍՑ-LO-2021/314 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2021/314 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական օդաճնշակի ձեռքբերման նպատակով 12.08.2021թ.-ին հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/117» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն:

iii. «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/117» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սմարթ էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն:

v. 28.08.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

vi. Պատվիրատուն 27.08.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցի yerevan.electro@gmail.com էլ. փոստի հասցեին ներկայացրել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/117» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

vii. Հանձնաժողովի 15.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն նշված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները (ընդհանրապես չի ներկայացրել), որպիսի պայմաններում Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար ու մերժել:

viii. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, Բողոքներ քննող անձին է ներկայացվել 03.11.2021թ.-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.11.2021թ.-ի թիվ 26/26-1/15513-2021 գրությամբ «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն ՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական օդաճնշակի ձեռքբերման նպատակով 12.08.2021թ.-ին հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/117» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն, սակայն «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ն նշված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները (ընդհանրապես չի ներկայացրել), որպիսի պայմաններում Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար ու մերժել:

Վերոնշյալ փաստական հանգամանքների հիման վրա՝ Պատվիրատուն Մասնակցի նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ընթացակարգ նախաձեռնելու ու վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 15.09.2021թ.-ի թիվ 39/02-28-707 գրությունը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, Բողոքներ քննող անձին է ներկայացվել 03.11.2021թ.-ին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի

նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.11.2021թ.-ի թիվ 26/26-1/15513-2021 գրությամբ «Սմարթ Էլեկտրոնիկս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/314 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**